



# MIC IP 7000 HD

MIC-7130-PB4 | MIC-7130-PW4 | MIC-7130-PG4 | MIC-7230-PB4 | MIC-7230-PW4  
| MIC-7230-PG4



**BOSCH**

hy Installation manual | Տեղադրման ձեռնարկ



## Բովանդակության ցանկ

<b>1</b>	Անվտանգություն	<b>4</b>
1.1	Կարևոր տեղեկատվություն – լուսավորության անվտանգություն	4
<b>2</b>	Վաթերավորման բացում	<b>6</b>
2.1	Բազադրիչների ցուցակ - տեսախցիկ	6
2.2	Լրացուցիչ Գործիքներ	6
<b>3</b>	Ապրանքի նկարագրություն	<b>8</b>
<b>4</b>	Տեղադրման քայլերի նկարագրություն	<b>9</b>
<b>5</b>	Սարքավորման կարգավորման ծրագրավորում վաթերավորման արկղի մեջ	<b>10</b>
<b>6</b>	Ժամանակավոր սեղանի վրա կարգավորումների ծրագրավորում:	<b>11</b>
<b>7</b>	Տեղադրման վայրը և տեղադրման դիրքը	<b>12</b>
7.1	Ընտրե՛ք տեղադրման վայրը	12
7.2	Տեղադրման դիրքի ընտրություն	13
<b>8</b>	Տեղադրման տարբերակների համառոտ նկարագրություն	<b>15</b>
<b>9</b>	Տեսախցիկի տեղադրում	<b>18</b>
<b>10</b>	Միացումները * սնուցում և կառավարում	<b>19</b>
10.1	Տեղեկություն տեսախցիկի սնուցման և կառավարման վերաբերյալ	19
10.2	Տեսախցիկի սնուցման տարբերակները	19
10.3	Էներգետ միակցիչներ	20
10.4	Տեսախցիկի միացում	20
10.5	Տեսախցիկի միացումը համակարգչին	21
<b>11</b>	Տեսախցիկի տեղադրումը թեփվածությամբ	<b>23</b>
<b>12</b>	Համակարգի Տիպային Կառուցվածքներ	<b>29</b>
12.1	Տիպային IP կառուցվածք 95 W midspan (առանց միացնելու մուտքը/ելքը)	29
12.2	Տիպային Կառուցվածք MIC-ALM-WAS-24 կիրառելիս	30
12.3	Տիպային IP կառուցվածք VJC-7000-90 կիրառելիս	31
<b>13</b>	Անսարքությունների շտկում	<b>32</b>
<b>14</b>	Սպասարկում	<b>34</b>
<b>15</b>	Տեխնիկական տվյալները	<b>35</b>

# 1 Անվտանգություն

## 1.1 Կարևոր տեղեկատվություն — լուսավորության անվտանգություն

Այս բաժինը վերաբերում է միայն այն տեսիլքիկներին, որոնք ունեն այլընտրանքային լուսավորող ախտաուար:



### Ծանուցում!

Այս ապրանքը արդեն փորձարկվել է ըստ ստանդարտ IEC62471:2006 “Լամպերի Լուսակենսաբանական անվտանգության և լամպային համակարգերի”. Ապրանքի արտադրողները գերազանցում են ԱՐՏՈՆՅԱԼ խմբի սահմանափակումները՝ ցանցարդանրի ուլտրամանուշակագույնի և էղջերաթաղանթի/ուպլյակիների ինֆրակարմիրի վտանգի, ինչպես սահմանված է IEC 62471:2006 կողմից: Այս ապրանքը համապատասխանում է Ռիսկային խումբ 1-ի արտադրողների սահմանափակումներին՝ ԻԿ և Սպիտակ լուսալույզների համար:

IEC 62471-ը ապահովում է անհրաժեշտ մեթոդները սահմանելու ցանկացած լամպի կամ այլ՝ լամպ պարունակող ապրանքի ռիսկայնության խումբը: IEC 62471 հախտատեղող ռիսկայնության խմբերը ցույց են տալիս պոտենցիալ վտանգավոր տեսանելի հառազայրման ռիսկայնության աստիճանը: Ռիսկայնության խմբերը դասակարգվել են հիմք ընդունելով լամպերի օգտագործման տասնամյակների փորձն և լուսային հառազայրման հետևանքով առաջացած դժբախտ պատահարների վերլուծությունը:

ԱՆՎՏԱՆԳ Խումբ — բացակայում է տեսողության համար ոչջամտորեն կանխատեսելի վտանգ, նույնիսկ անընդհատ և անսահմանափակ օգտագործման դեպքում: Այս խմբին պատկանող սարքավորումների վառ օրինակներ են փայլատ շիկացման լամպերը և ցերեկային լույսի լամպերը, որոնք շահագործվում են տնային պայմաններում:

Ռիսկային խումբ 1 — այս խմբին են դասվում ապրանքները, որոնք անվտանգ են կիրառության ոլորտների մեծամասնության համար, բացառությամբ երկարատև ազդեցություններից, որոնց դեպքում կարող է լինել ուղիղ ազդեցություն տեսողական օրգանների վրա: Ռիսկային խումբ 1-ի օրինակ է ներքին մարտկոցով աշխատող ջահը (լապտերը):

Ճառագայրման Վտանգավորության Արժեքը (ՃՎԱ) դա Ճառագայրման Մակարդակի (հեռավորություն, ազդեցության տևողություն) և Ճառագայրման Սահմանային Արժեքի հարաբերակցությունն է (ՃՄԱ): Եթե ՃՎԱ-ն մեծ է 1-ից, դա նշանակում է, որ սարքը գերազանցում է համապատասխան Ռիսկայնության խմբի Ճառագայրման Սահմանային Արժեքը: ՃՄԱ-ն այն մակարդակն է, որի դեպքում լուսային հառազայրումը բացասական կենսաբանական ազդեցություն չի ունենում աչքի կամ մաշկի վրա:

Վտանգավոր Հեռավորություն (ՎՀ) դա հեռավորությունն է հառազայրման աղբյուրից, որտեղ Ճառագայրման Մակարդակը հավասար է համապատասխան ՃՄԱ-ին: Այլ խոսքերով ասած, եթե ԱՎԱ=1 համապատասխան ռիսկայնության խմբի համար: Ինչ վերաբերում է աչքի էղջերաթաղանթի և ուպլյակի համար ինֆրակարմիր հառազայրման վտանգավորությանը, հիմք ընդունելով ԱՆՎՏԱՆԳ խմբի սահմանային հառազայրման սլյալները՝ ՃՎԱ-ն փորձնական 200 մմ հեռավորության վրա կազմում է 2.19: Հիմք ընդունելով Ռիսկային խումբ 1-ի սահմանային հառազայրման սլյալները՝ ՃՎԱ կազմում է 0.386: Անվտանգ խմբի ՎՀ կազմում է 297 մմ:

Ինչ վերաբերում է աչքի ցանցաթաղանթի համար կապույտ լույսի վտանգավորությանը, ՃՎԱ-ն կազմում է 22.9՝ որպես հիմք ընդունելով ԱՆՎՏԱՆԳ խմբի սահմանային հառազայրման սլյալները և փորձնական 200 մմ հեռավորությունը:

Չվերահսկվող խմբի ՎՀ կազմում է 2675 մմ:

Այս արժեքներն ամփոփված են ստորև ներկայացված աղյուսակում:

Վտանգավորություն	ԱՆՎՏԱՆԳ ԽՈՐՀի Սահմանային հառազայրման արժեք			Ռիսկային Խումբ 1-ի Սահմանային հառազայրման արժեք		
	տ, տևողություն	ժ, հեռավորություն	ձՎԱ	տ, տևողություն	ժ, հեռավորություն	ձՎԱ
Ինֆրակարմիր հառազայրման վտանգավորությունը աչքի եղջերաթաղանթի և ոսպնյակի համար	1000 վ Վտանգավոր Հեռավորություն	200 մմ 279 մմ	2.19	100 վ	200 մմ	0.386
կապույտ լույսի վտանգավորությունը աչքի ցանցաթաղանթի համար	10,000 վ Վտանգավոր Հեռավորություն	200 մմ 2675 մմ	22.9	100վ	200 մմ	0.266

## 2 փաթեթավորման բացում

- Այս սարքավորումը պետք է փաթեթավորումից հանել և խնամքով վարվել: Ստուգել արտաքին փաթեթավորումը տեսանելի վնասվածքները բացառելու համար: Եթե կարծում եք, որ սպրանքը վնասվել է առանձին ժամանակ, մատակարարողին անմիջապես տեղեկացրեք այդ մասին:
- Համոզվեք, որ սպրանքի մասերի ցուցակում քվարկված բոլոր մասերն առկա են: Եթե որևէ իրեր բացակայում են, տեղեկացրե՛ք Ձեր Bosch Անվտանգության համակարգերի վաճառքի կամ Հաճախորդների Սպասարկման Ներկայացուցչին:
- Չօգտագործել այս սպրանքն, եթե որևէ բաղադրիչ վնասված է երևում: Խնդրում ենք սպրանքների վնասված լինելու դեպքում կապ հաստատել Bosch Security Systems (Բոսչի Անվտանգության Համակարգերի) հետ:
- Բնօրինակ հանդիսացող փաթեթավորման սովորաբար ամենաանվտանգ բեռնափակն է, որով պետք է տեղափոխվի միավորը և պետք է օգտագործվի, եթե միավորը վերադարձվելու է սպասարկման համար: Պահե՛ք այն հետագա հնարավոր օգտագործման համար:

MIC7000 փաթեթավորումը նախատեսված է.

- Թույլ տալ տեսախցիկը տեղադրողներին կատարել կարգավորումներն առանց տեսախցիկին առանց փաթեթավորման արկղից հանելու:
- Ապահովել ժամանակավոր սեղան կամ հենարան:



**Ուշադրություն!**

Զգուշորեն բարձրացրեք կամ տեղափոխե՛ք տեսախցիկները MIC7000, քանի որ դրանք մեծ ճաշ ունեն (6.7 կգ (14.7 ֆ)):

### 2.1 Բաղադրիչների ցուցակ - տեսախցիկ

Մեկ (1) MIC71xx կամ MIC72xx Տեսախցիկ
Մեկ (1) Արագ տեղադրման ուղեցույց
Մեկ (1) DVD դիսկ վաստարդըթերթով
Մեկ (1) Բանալի [տեսախցիկը տեղադրելու անհրաժեշտության դեպքում, հանելու և ամրացնելու փականները և հանելու գլխավոր մասի խցանը այլընտանանային տարբերակներ լուսավորող ախտաբան (Վաճառվում է առանձին) տեղադրելիս]
Մեկ (1) Բազային միջադիր
Մեկ (1) RJ45 կապակցիչ
Չորս (4) MAC Հասցե պիտակ
Մեկ (1) հողանցման պտուտակ

### 2.2 Լրացուցիչ Գործիքներ

Հետևյալ աղյուսակում ներկայացված են լրացուցիչ գործիքները (չեն մատակարարվում Բոսչի կողմից), որոնք կարող են պահանջվել MIC տեսախցիկը կամ կից պարագաները տեղադրելիս.

1 Խաչածև պտուտակահան՝ տեսախցիկի հողանցման լարն ամրացնելու համար:
1 Կարգավորելի պտուտակաբանալի կամ մանեկադործիչ բանալիների փաթեթ՝ տեսախցիկը հեռակին ամրացնելու համար:

- |  |
|--|
| <p>1 Մանեկադարձիչ բանալի պատվող 3/4 գլխիկով՝ ինչը հնարավոր է դարձնում օգտագործել մատակարարվող Բանալի՝ անհրաժեշտության դեպքում փականները և խցանները հեռացնելու համար:</p>   |
| <p><i>Վեցանիստ գլխիկով պտուտակահանով տեսախցիկը թեփելու համար .</i></p> <p>1 Մանեկադարձիչ բանալի 5 մմ տրամագծով վեցանիստ գլխադիրով (կամ T30 Torx գլխադիրով)՝ կարգավորող հանգույցի հեղյուսները հեռացնելու կամ տեղադրելու համար:</p> <p><i>Torx գլխիկով պտուտակահանով տեսախցիկը թեփելու համար .</i></p> <p>1 Մանեկադարձիչ բանալի Torx գլխադիրով (T30 կամ T27) կարգավորող հանգույցի հեղյուսները հեռացնելու կամ տեղադրելու համար:</p> |

### 3 Ապրանքի նկարագրություն

MIC7000 տեսախցիկը բարձր արտադրողականություն ունեցող, եզանակակայուն, բարձր հարվածադիմացկուն, շուրջօրյա ռեժիմով լիարժեք աշխատող PTZ տեսախցիկ է, որը նախագծվել է առաջարկելու տեսանկարահանման վստահելի, կայուն և բարձրարժեք լուծում բարձրարժեք անվտանգության ապահովման համար:

Պատկերի վերահսկողությունն ու դրա որակը հանդիսանում են բոլոր PTZ տեսախցիկների անբաժանելի բաղադրիչներն և MIC7000 տեսախցիկն ապահովում է պատկերի բոլոր մանրամասների հստակ փոխանցում: Տեսախցիկն ունի պրոֆեսիոնալ մակարդակի պատկեր ստանալու հարթակ, որը հնարավորություն է տալիս փոխանցել 720p50/60 1080p25/30 HD որակի տեսագրություն լուսավորության շեղումներ ունեցող միջավայրերում:

Տեսախցիկի երկու խմբերն էլ - MIC IP starlight 7000 HD (MIC71xx) և MIC IP dynamic 7000 HD (MIC72xx) ունեն 30x օպտիկական խոշորացում (12x թվային) և չկուն, միջավայրին համապատասխան տեղադրման տարբերակներ՝ (ուղղածից, շրջված կամ խոնարհված) գերազանց տեսադաշտ ստանալու համար:

Բոլոր MIC տեսախցիկների վրա պարտադիր առկա է զսպանակե մեղանիզմով աշխատող ապակի մաքրող երկարակյաց սկիչիկներ խոզանակը:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է MIC տեսախցիկի լրացուցիչ բաղադրիչները: Մանրամասների համար նայել յուրաքանչյուր բաղադրիչի տեխնիկական բնութագրերը: Որոշ բաղադրիչներ հասանելի են միայն որոշակի տարածաբջջաններում:

Բաղադրիչներ	Նկարագրություն	Բաղադրիչներ	Նկարագրություն
MIC-DCA-H - MIC-DCA-HB - MIC-DCA-HW - MIC-DCA-HG	Կախովի մալուխային Սև Սպիտակ Մոխրագույն գույների ազապտեր	MIC-SCA - MIC-SCA-BD - MIC-SCA-WD - MIC-SCA-GD	Հարթ մալուխային Սև Սպիտակ Մոխրագույն գույների ազապտեր
MIC-CMB - MIC-CMB-BD - MIC-CMB-WD - MIC-CMB-GD	Անկյունային տեղադրման համար Սև Սպիտակ Մոխրագույն գույների կրոնտեյն	MIC-SPR - MIC-SPR-BD - MIC-SPR-WD - MIC-SPR-GD	Բաժանարար Սև Սպիտակ Մոխրագույն գույների սկավառակ
MIC-WMB - MIC-WMB-BD - MIC-WMB-WD - MIC-WMB-GD	Պատի վրա տեղադրման համար Սև Սպիտակ Մոխրագույն գույների կրոնտեյն	MIC-ILx-100  - MIC-ILB-100 - MIC-ILW-100 - MIC-ILG-100	Սպառողի կողմից տեղադրվող լուսավորող ախտաբույժական նախագծվել է հատուկ MIC7000 տեսախցիկների համար Սև Սպիտակ Մոխրագույն գույների մեջ
MIC-PMB	Մյան վրա տեղադրման համար կրոնտեյն (միայն չժանգոտող պողպատից)	MICIP67-5PK	MIC7000 IP67 միացման լրակազմ
VJC-7000-90	VIDEOJET connect (Լիարժեքներն մեակված ցանցային ինտերֆեյս/սնուցման սարք	NPD-6001A	60 Վատտ միջակայք [Զի օգտագործվում լուսավորող ախտաբույժական հետ.]
VG4-A-PSU1, VG4-A-PSU2	24 VAC (96 W) սնուցման աղբյուր	NPD-9501A	95 Վատտ միջակայք
MIC-ALM-WAS-24	Միացված՝ հակառևանգման և լվացման լրացուցիչ ինտերֆեյս	MIC-67SUNSHLD	Արևադաշտային հովար (միայն սպիտակ)




# 4 Տեղադրման ֆայլերի նկարագրություն

Հետևյալ նկարը ցույց է տալիս MIC7000 տեսախցիկի տեղադրման կարգը:

Ջեր MIC տեսախցիկը տեղադրելու համար, Հետևե՛ք այս ֆայլերին կատարե՛ք հետևյալ գործողությունները:

Ծանոթագրություն. Հնարավոր է բոլոր ֆայլերին հետևելու անհրաժեշտություն չլինի՝ պայմանավորված նրանով, թե որն է ձեր տեսախցիկի մոդելը, դրա տեղադրման վայրն և դիրքն, ինչպես նաև թե ինչպիսին են ձեր ամրացման կրողները և այլ պարագաները:



## 5 Սարքավորման կարգավորման ծրագրավորում փաթեթավորման արկղի մեջ




Ուշադրություն!

Զգուշորեն բարձրացրե՛ք կամ տեղափոխե՛ք տեսախցիկները MIC7000, քանի որ դրանք մեծ բառ ունեն (6.7 կգ (14.7 ֆ))):

Տեսախցիկի փաթեթավորումը թույլ է տալիս տեղադրողներին միացնել տեսախցիկը ցանցին և առարել անհրաժեշտ կարգավորումներն առանց տեսախցիկը արկղից հանելու:

1. Հանե՛ք տեսախցիկի արկղի վերևում տեղադրված լրացուցիչ պարագաների արկղը:



2. Տեսախցիկի միացումը համակարգչին, էջ 21: Նշե՛նք, որ ապակի մաքրող խոզանակը մեկ անգամ կմաքրի տեսախցիկի ապակին և կվերադառնա էլման դիրք:

3. Կարգավորե՛ք տեսախցիկը: Մանրամասների համար նայե՛ք Կարգավորում բաժինը :

Ծանոթագրություն. Մի փոխե՛ք տեսախցիկի դիրքը դեպի “Շրջված”, քանի դեռ տեսախցիկը արկղի մեջ է: Տեսախցիկի գնդաձև հատվածը պետք է ազատ պտտվի : Եթե տեսախցիկն անհրաժեշտ է տեղադրել “Շրջված” դիրքով, հանե՛ք այն արկղից և կատարե՛ք Ժամանակավոր սեղանի վրա կարգավորումների ժամանակավոր սեղանի վրա կարգավորումների ծրագրավորում: , էջ 11:


4. Անջատե՛ք հաղորդալարերը/մալուխները տեսախցիկի պատվանդանի միակցչից:

# 6

## Ժամանակավոր սեղանի վրա կարգավորումների ծրագրավորում:

Նախնական ցանցային միացումները և կարգավորումները կատարելիս տեսախցիկը (դեռևս փաթեթավորմամբ) կարող է ժամանակավորապես տեղադրվել հարթ, հորիզոնական մակերևույթի վրա, ինչպիսին է, օրինակ, պատվանդանը կամ սեղանը:

1. Հանեք տեսախցիկի արկղի վերևում տեղադրված լրացուցիչ պարագաների արկղը:
2. Արկղից հանեք տեսախցիկը (դեռևս փաթեթավորմամբ): Ուղղահայած տեղադրեք տեսախցիկը հարթ հորիզոնալ մակերևույթի վրա:
3. Հեռացրեք տեսախցիկի գնդաձև հատվածը պաշտպանող փաթեթավորումը:



4. *Տեսախցիկի միացումը համակարգչին, էջ 21:* Նշեմք, որ ապակի մաքրող խոզանակը մեկ անգամ կմաքի տեսախցիկի ապակին և կվերադառնա ելման դիրք:
5. Կարգավորեք տեսախցիկը: Մանրամասների համար նայեք Կարգավորում բաժինը :



### Ծանուցում!

Եթե փոխել տեսախցիկի դիրքը դեպի “Շրջված” (վեբ բրաուզերի կարգավորումներ էջում. Ընդլայնված> Տեսախցիկ> Տեղադրման մենյու> Դիրքավորում), ապա տեսախցիկի գլխիկն ինքնաբերաբար կպտտվի 180°-ով: Ուսադրություն դարձրեք, որ հավարն այդ դեպքում գտնվելու է տեսախցիկի վերևի հատվածում:

6. Անջատեք հաղորդալարերը/մալուխները տեսախցիկի պատվանդանի միակցչից:

# 7 Տեղադրման վայրը և տեղադրման դիրքը

## 7.1 Հնարեք տեղադրման վայրը

MIC կամերաները նախագծված են այնպես, որ դրանք տեղադրվեն պարզ լինի տարբեր վայրերում, ինչպիսիք են շենքերը և սյուները, որոնք հարմար են CCTV սարքավորումները անմիջականորեն իրենց վրա ամրացնելու համար :

Հնարեք սարքավորման անվտանգ տեղադրման վայրը և դիրքը: Կալվազույն տարբերակն այն վայրն է, որտեղ սարքավորման աշխատանքը չի կարող խափանվել ոչ միտումնավոր և ոչ էլ պատահաբար:

Համոզվեք, որ տեղադրման վայրը համապատասխանում է *NEC725* և *NEC800 (CEC կանոն 16-224* և *CEC բաժին 60)* չափանիւթերին՝ կապված հասանքի տատանումներից և կայծակից պաշտպանված լինելու հետ:

Մի տեղադրեք սարքավորումը.

- Որևէ ջերմային աղբյուրների կողքին
- Հասանքի օդային էլեկտրահաղորդման գծերի, էլեկտրական ցանցերի կամ էլեկտրական լապտերների կողքին կամ այն վայրերում, որտեղ այն կարող է բախվել նման գծերին, ցանցերին կամ լապտերներին:
- ▶ Համոզվեք, որ տեղադրման համար ընտրված մակերևույթը բուր սպասվող բեռնման, թրթռոցի և ջերմաստիճանի պայմաններում կդիմանա տեսախցիկի և ամրակցման պարագաների (վաճառվում է առանձին) ընկալող ծանրությունը:

### Ծանուցում!



MIC տեսախցիկները պետք է տեղադրել հետևյալ մակերևույթների մեկի վրա.

- Բետոն (միաձուլված/ձուլած)
- Քարաբարձ բետոնե էլեմենտով (բետոնե սալիկներ)
- Աղյուս (բուր տեսակի)
- Մետաղ (Պողպատ/ Ալյումին նվազագույնը 1/8 հաստությամբ)

### Ուշադրություն!



Կայծակի հարվածից վնասվելու ռիսկ

Եթե տեսախցիկը տեղադրված է այնպիսի վայրում, որտեղ համախալի են կայծակի հարվածները, ապա Bosch-ը խորհուրդ է տալիս տեղադրել կայծակահեռացուցիչ 0.5 մ (1.6 ֆուտ) հեռավորության և նվազագույնը 1.5 մ (4.9 ֆուտ)

բարձրության վրա: Հողանցման ապահով միակցումը տեսախցիկի կորպուսին նույնպես կապառուցվի կայծակի երկրորդային ազդեցություններից: Տեսախցիկի կորպուսն ինքն իրենով կարող է դիմակայել կայծակի երկրորդային ազդեցություններին:

Եթե կայծակից ապահովված է պատշաճ պաշտպանություն, ապա ներքին էլեկտրոնիկան և տեսախցիկը չպետք է վնասվեն:

### Տեղադրումը խոնավ միջավայրում (օրինակ ջրափնյա գծի մոտ)

Տեսախցիկի հետ առաջվող ամրակներն և ֆիքսատորները օգնում են ամրացնել տեսախցիկը: Տեսախցիկի տեղադրման և սպասարկման ժամանակ միշտ անհրաժեշտ է օգտագործել Բոշի կողմից մատակարարվող պտուտակներն և այլ ամրակները: Տեսախցիկի զննածև մասը ունի երեք (3) պլաստիկ պտուտակ, որոնք տեղադրվում են գործարանում՝ կանխելու տեսախցիկի զննածև հատվածում տեղադրված այն սարքավորումների կոռոզիան, որոնք չունեն լրացուցիչ պարագաներ: Արևապաշտպան հովարի կամ լուսավորող ախտուար տեղադրման դեպքում այդ պլաստիկ պտուտակները հանվում են և փոխարինվում են յուրաքանչյուր լրացուցիչ պարագայի հետ առաջվող պտուտակներով:

Մինչ տեղադրումը ստուգեք մետաղական մասնիկները ծածկող ներքի որակը՝ համոզվելու, որ այն վնասված չէ: Եթե նկատեք, որ ներքը վնասված է, ներկեք վնասված հատվածը ձեզ հասանելի ներկով կամ պատեք կերամիկով:


Տեղադրման ընթացքում խուսափեք տեսախցիկի մետաղական ամրակների շփումներից այնպիսի նյութերի հետ, ինչպիսին է չժանգոտող սպիտակ: Նման շփումը կարող է հանգեցնել էլեկտրական կոռոզիայի և վնասել տեսախցիկի արտաքին տեսքը:

Երաժշտիքը չի փակում սխալ տեղադրման արդյունքում առաջացած արտաքին տեսքի նման վնասվածքները, բայց որ դրանք չեն ազդում տեսախցիկի ֆունկցիոնալության վրա:

### 7.2


### Տեղադրման դիրքի ընտրություն

MIC սերիայի տեսախցիկները նախատեսված են ուղղահայած դիրքով տեղադրելու համար (ուղիղ վերև, 90° անկյան տակ), բայց կարող են տեղադրվել նաև 45° անկյան տակ (ուղիղ ներքև, 90° անկյան տակ) կամ ուղղահայած դիրքով թեփվածությամբ (զնդածև հատվածը դեպի վեր 45° անկյան տակ): Եթե զնդածև հատվածը դեպի ներքև է բայց, ապա անկյուններում առկա սահմանափակումները խախտվում են և տեսախցիկի բնականոն աշխատանքը: Ստորև ներկայացված նկարում ցուցադրված են MIC տեսախցիկի ճիշտ և սխալ դիրքերը:




Տեղադրման ճիշտ դիրք – վերև, բայց Տեղադրման ճիշտ դիրք - թեփվածությամբ Տեղադրման սխալ դիրք

Ուշադրություն դարձրե՛ք տեսախցիկի հովարի դիրքին բայց դիրքով տեղադրելիս: Հավարը մտն է բարձրագույն վերևի հատվածին (MIC տեսախցիկի կորպուսը), մինչդեռ բայց դիրքում այն մտն է բարձրագույն ներքևի հատվածին: Ծանոթացրություն . Տեսախցիկի անկյան տակ տեղադրելիս համոզվե՛ք, որ տեղադրման վայրն ապահովում է տեսախցիկի բարձր համար անհրաժեշտ տարածություն (370 մմ (14.6 in.)):



Նկար 7.1: Թեփվածությամբ տեղադրված MIC7000 տեսախցիկի նկարահանման համար անհրաժեշտ տարածությունը. վերևից Ստորև ներկայացված նկարում պատկերված է տեսախցիկի թեփվածության անկյունն ուղղահայած դիրքում:



Նկար 7.2: MIC7000 տեսախցիկի քեֆվածության անկյունը. **145°** յուրաքանչյուր ուղղությամբ; **290° AutoPivot** գործառույթի ակտիվացման դեպքում:


# 8

## Տեղադրման տարբերակների համառոտ նկարագրություն

Բոլոր վաճառում է տեսախցիկի տեղադրման բազմաթիվ տարբերակներ ապահովող ամրացնող կրոնտեյնիների ամբողջական փաթեթ:


Տեղադրման առավել տարածված տարբերակն է տեղադրումը կայմի ամենավերևի հատվածում, ինչը հնարավորություն է ընձեռում տեղադրել CCTV (տեսագրման) սարքավորումը և ապահովում է տեղադրման ամուր հարթակ, որը զգալիորեն նվազեցնում է տեսախցիկի տեղաշարժման հավանականությունը և որտեղ սովորաբար ներկատուցված է լինում հսկայական պահարան՝ տեղադրելու համար լրացուցիչ սարքավորումներ, ինչպիսին է օրինակ սնուցման աղբյուրը:

Կայմի վերևի հատվածում տեսախցիկի տեղադրման համար հարմար է օգտագործել կախովի DCA տեղադրման լրակազմը:




Նկար 8.1: Տիպային կախովի DCA տեղադրման լրակազմ

Տեսախցիկը կարող է տեղադրվել նաև լապտերայան կողային հատվածում, կայմի կամ նմանատիպ սյան վրա՝ օգտագործելով տեսախցիկը սյան վրա տեղադրելու համար նախատեսված կրոնտեյնը (MIC-PMB): Անհրաժեշտ է հիշել, որ լապտերայանները կարող են տեղափոխվել և համապատասխան հարթակ չեն հանդիսանում բոլոր պայմանների կամ կիրառությունների համատեքստում:




Ստորև ներկայացված են MIC տեսախցիկը կայմի կողային հատվածում ամրացնելու համար անհրաժեշտ երեք տեսակի կրոնտեյններ (յուրաքանչյուրը Վահուվում է առանձին):


Մանրագրություն . Ցուցադրված են ապրանքատեսակներին, ինչպես նաև տեղադրման լրակազմի բոլոր առկա գույների կոդերը (-BD սև գույնի, WD սպիտակ գույնի, and GD մոխրագույնի համար):



Նկար 8.2: Տեսախցիկը կայմի վրա ամրացնելու տիպային լրակազմ  
Տեսախցիկը կարող է ամրացվել նաև շեմֆի վերևի հատվածում, շեմֆի պատին, անկյունում և տանիքի բլավի տակ:




Նկար 8.3: Տեսախցիկը պատի վրա ամրացնելու տիպային լրակազմ




Նկար 8.4: Տեսախցիկը անկյունում ամրացնելու տիպային լրակազմ





Նկար 8.5: Տեղադրում ուղիղ մակերևույթի վրա – տեսախցիկը ուղղահայած դիրքով է (**MIC տեսախցիկ + տակդիր**)



Նկար 8.6: Տեղադրում ուղիղ մակերևույթի վրա – տեսախցիկը շքված դիրքով է (**MIC տեսախցիկ + տակդիր + եղանակային պայմաններին համապատասխան IP67 լրակազմ /լրակազմ միացման համար**)



**Ծանուցում!**

Պահպանե՛ք անվտանգության բոլոր կանոնները և տեղական շինարարական կանոնները:

Տեղադրման հրահանգին ծանոթացե՛ք MIC սերիայի տեսախցիկների համար նախատեսված տեղադրման կրոնստեյնին վերաբերող ուղեցույցում:

## 9 Տեսախցիկի տեղադրում



### Ուշադրություն!

Տեղադրումը պետք է կատարեն որակավորված մասնագետները Ազգային էլեկտրատեխնիկական Կանոնագրքի<sup>®</sup> (ԱԷԿ)), Կանադայի էլեկտրատեխնիկական կանոնագրքի մաս Լ-ի (որոնք կաշվում են նաև CE Code կամ CSA C22.1) պահանջներին և բոլոր տեղական գործող օրենքներին համապատասխան: Bosch Security Systems, Inc. ընկերությունը պատասխանատվություն չի կրում սխալ տեղադրման հետևանքով առաջացած որևէ վնասի կամ կորստի համար:



### Ուշադրություն!

#### ՀՈՍԱՆՔԱՀԱՐՎԵԼՈՒ ՎՏԱՆԳ

Հասնեման հարմարությունները նվազեցնելու համար տեսախցիկը և այլ լրացուցիչ պարագաները տեղադրելուց առաջ անջատե՛ք տեսախցիկի սնուցումը և/կամ սնուցման սարքը:

Տեսախցիկը կարող է տեղադրվել.

- MIC-DCA-ի կամ պատի վրա տեղադրման համար նախատեսված MIC կրող ստեյթի վրա կամ
- անմիջականորեն ամրացման համար նախատեսված մակերևույթի վրա՝ օգտագործելով MIC7000 IP67 միացման լրակազմ (MICIP67-5pk, վաճառվում է առանձին)

Նայե՛ք լրակազմի հետ առաջվող տեղադրման ուղեցույցը:



### Ծանուցում!

Տեսախցիկը MIC-DCA վրա տեղադրելիս NEMA 6P դասակարգմանը համապատասխանելու համար տեղադրողները պետք է համոզվեն, որ սպառողի կողմից տրամադրող մալուխի համար նախատեսված խցուկները (օդակները) կամ մալուխալարերը համապատասխանում են NEMA 6P դասակարգմանը:

# 10 Միացումները - սնուցում և կառավարում

## 10.1 Տեղեկություն տեսախցիկի սնուցման և կառավարման վերաբերյալ

Տեսախցիկը փոխանցում է PTZ կառավարման հրահանգներ և պատկերներ TCP/IP ցանցի միջոցով: Այն նաև հնարավորություն է ընձեռում օգտագործողներին կառավարելու տեսախցիկի պատկերի և կառավարման համապատասխան կարգավորումներն, ինչպես նաև ցանցային համապատասխան կարգավորումները:

Տեսախցիկը IP մոդուլում ներառում է ցանցային տեսաերվեր: Մերվերի հիմնական գործառնությիւնը տեսա- և կառավարման սվյալների կոդավորումն է և դրանց փոխանցումը TCP/IP ցանցի միջոցով: Այս մոդուլն իր H.264 կոդավորման գործառնությով կատարյալ հարմար տարբերակ է IP կապի և հեռավորության վրա բխյային տեսագրությունների և մուլտիպլեքսների հասանելիության տեսանկյունից: Առկա ցանցերի օգտագործումը նշանակում է, որ ինտեգրացիան CCTV համակարգերի կամ տեղական ցանցերի հետ կարող է շատ արագ և հեշտ իրականացվել: Մեկ տեսախցիկի տեսապատկերը կարող է միաժամանակ հասանելի լինել մի քանի ընդունիչներից (հաղորդիչներից):

## 10.2 Տեսախցիկի սնուցման տարբերակները

Տեսախցիկը կարող է սնուցվել ցանցից High Power-over-Ethernet (Բոշ ընկերության Բարձրակարգ PoE տարբերակը) չափանիււեներին համապատասխան՝ Բոշ ընկերության Բարձրակարգ PoE Midspans (վաճառվում է առանձին մոդելի միջոցով: Նման կարգավորման դեպքում դիտման, տեսախցիկի սնուցման և կառավարման համար անհրաժեշտ է միայն մեկ (Cat5e/Cat6e) մալուխային միացում:

Տեսախցիկի ընդունում է նաև ստանդարտ 24 VAC էլեկտրամատակարարման աղբյուր, երբ չի կիրառվելու Բարձրակարգ PoE ցանցային ինտերֆեյսը: Սպառողի կողմից տրամադրվող լարերը պետք է համապատասխանեն էլեկտրատեխնիկական կանոնակարգին (2-րդ կարգի հզորության մակարդակ):

Ապահովությունն առավելագույնի հասցնելու համար տեսախցիկը կարելի է միաժամանակ միացնել Բարձրակարգ PoE Midspan-ին և 24 VAC էլեկտրամատակարարման աղբյուր-ին: Եթե Բարձրակարգ PoE և 24 VAC միաժամանակ են օգտագործվում, տեսախցիկը որպես կանոն ընտրում է լրացուցիչ աղբյուր (24 VAC) և նվազագույնս է օգտագործում Բարձրակարգ PoE Midspan էներգիան: Եթե 24 VAC էլեկտրամատակարարման աղբյուր աշխատանքը խափանվում է, տեսախցիկը առանց որևէ խնդրի սկսում է սնուցվել Բարձրակարգ PoE-ից: 24 VAC էլեկտրամատակարարման աղբյուր աշխատանքը վերականգնելուց հետո տեսախցիկը նորից միացվում է 24 VAC սնուցման սարքին:



### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ!

Բոշ ընկերության Բարձրակարգ PoE տարբերակը:  
Եթե տեսախցիկի սնուցումն ապահովվում է HPoE կամ միջանկյալ սարքավորման միջոցով, անհրաժեշտ է տեղադրել լրացուցիչ պաշտպանություն հոսանքի տատանումներից:

Ստորև ներկայացված աղյուսակում "X"-ով նշանակված է MIC7000 տեսախցիկի մոդելների էլեկտրամատակարարման աղբյուր առկա տարբերակները:

ՏԵՍԱԽՑԻԿԻ ՄՈՂԵԼԸ	60 Վատտ միջակայք	95 Վատտ միջակայք	VIDEOJET connect	24 VAC PSU
Կուսարձակով մոդելներ		X	X	X
Առանց լուսարձակի մոդելներ	X	X	X	X

Ստորև ներկայացված աղյուսակում րվարկված են սնուցման այն սարքերը, որոնք կարող են միաժամանակ միացվել տեսախցիկին:

Եթե սնուցումը մատակարարվում է.	Տեսախցիկը կարող է սնուցում ստանալ միաժամանակ
60 Վատտ միջակայք (NPD-6001A)	24 VAC PSU (VG4-A-PSU1, VG4-A-PSU2)
95 Վատտ միջակայք (NPD-9501A)	
VIDEOJET connect (VJC-7000-90)	



**Ուշադրություն!**

Համապատասխան EN50130-4 Հակահեռանցման ստանդարտ – CCTV անվտանգության հայտերի համար  
 Համապատասխանել EN50130-4 Հակահեռանցման ստանդարտի պահանջներին, որն անհրաժեշտ է օժանդակ անխափան էլեկտրամատկարարմանը: UPS-ը պետք է ունենա Տրանսֆերային ժամանակ 2-6 ամիս և Պակուստային իրականացման ժամանակավերջի, քան 5 վայրկյան՝ հզորության մակարդակին հասնելու, ինչպես նշված է ապրանքի նկարագրությունում:

### 10.3 Էթերնետ միակցիչներ



**Ուշադրություն!**


Ethernet մալուխները պետք է անցկացվեն շրջակա միջավայրի ազդեցությանը դիմակայելուն ընդունակ հողանցման հաղորդաչորանների միջով:

Ծանոթագրություն: Մալուխային կապուցներ ստեղծելու պահանջներն և սահմանափակումները նշված են ազգային էլեկտրատեխնիկական կանոնագրքում (ԱԷԿ):

Մալուխի տեսակները	Cat5e/Cat6e Ethernet (անմիջապես դեպի տեսախցիկ կամ դեպի տեսախցիկի և ցանցի միջև ցանցային անջատիչ)
Առավելագույն հեռավորությունը	100 մ (330 ft)
Թողունակություն	10BASE-T/100BASE-TX, ինֆրաընթերցում, կիսա/լիապուլկեմ
Բարձրակարգ PoE (95W պահանջվում է լուսարձակով մոդելների համար)	Օգտագործեք Բոս ընկերության 95 Վատտ միջակայք
Բարձրակարգ PoE (60W միայն առանց լուսարձակի մոդելների համար)	Օգտագործեք Բոս ընկերության 60 Վատտ միջակայք կամ մամուլ, որը համապատասխանում է IEEE 802.3at-ի 4-րդ կարգի չափանիշներին:
Եզրային միակցիչ	RJ45, խրոց

### 10.4 Տեսախցիկի միացում

Էլեկտրական, ինչպես նաև տվյալների փոխանցման համար անհրաժեշտ բոլոր միացումները կատարվում են տեսախցիկի պատվանդանին տեղադրված միակցիչի միջոցով:



Նկար 10.1: MIC7000 միակցիչներ

	Նկարագրություն	Կարի գույնը
1	RJ45 (Cat5e/Cat6e) միացուցիչը (խրոցը) (Բարձրակարգ PoE աջակցությամբ) Բոս ընկերության Բարձրակարգ PoE Midspan մոդելի ադապտերի կամ VJC-7000-90 սնուցման և դրանց միջև կապի համար:	
2	24 Վ լարմամբ էլեկտրասնուցման լարեր (տրամաչափը 24) դեպի VG4-A-PSU1 կամ VG4-A-PSU2 (եթե չի օգտագործվում PoE ցանցը)	Կար (Լ) = Սև Զեզուֆ (Զ) = Սպիտակ
3	Շասսիի հողանցման լար (տրամաչափը 18) միակցման ծայրով (զլիխիով)	Կանաչ
4	RS-485 միացուցիչների MIC-ALM-WAS-24 հետ կապի համար	+ = Մանուշակագույն - = Դեղին <b>GND</b> = Շագանակագույն
5	Հերմետիկ միացման լար տեսախցիկի պատվանդանի վրա	
6	RJ45 կապակցիչ (բույնը բույնին)	

Ծանոթագրություն . Եթե MIC տեսախցիկն անմիջականորեն անբացվում է մոնտաժային մակերևույթին, այլ ոչ թե MIC DCA –ին կամ պատի վրա տեղադրման համար նախատեսված MIC կրոնոտեյնին, Bosch-ը խորհուրդ է տալիս օգտագործել MIC7000 IP67 միացման լրակազմ (MICIP67-5pk, վաճառվում է առանձին)՝ միացումները խոնավությունից և վառու մասնիկներից պաշտպանելու համար: Յուրաքանչյուր լրակազմ պարունակում է մինչև 5 MIC7000 տեսախցիկ միացնելու համար անհրաժեշտ բոլոր պարագաները:

## 10.5

### Տեսախցիկի միացումը համակարգչին


Ծանոթագրություն :Ստորև ներկայացված են միացման երկու հնարավոր տարբերակները:

#### Տարբերակ Ա.

1. Տեսախցիկի RJ45 միացուցչից միացրե՛ք Ethernet (Cat5e/Cat6) մալուխը տեղական համակարգչային ցանցին (լուկա հաշվողական ցանցին) կցված ցանցային կոմուտատորին:
2. Միացրե՛ք հատուկ ցանցային կոմուտատորը համակարգչի վրա տեղադրված RJ45 միացուցչին:
3. Միացրե՛ք 24 Վ լարմամբ սնուցման լարերը Հոսանքի աղբյուր-ին:
4. Միացրե՛ք RS-485 լարերը MIC-ALM-WAS-24-ին (լրացուցիչ):
5. Կցե՛ք կանաչ հողակցման լարը (կետ 3 վերևի նկարում) միացվող մակերևույթի վրայի հողանցման միացմանը օգտագործելով տրված պտուտակը կամ այլ համապատասխան սողնակ:

#### Տարբերակ Բ.

1. Խաչաձև միացումների համար նախատեսված մալուխի միջոցով միացրե՛ք տեսախցիկն անմիջապես այնպիսի ցանցային սարքավորումներին, ինչպիսիք են համակարգիչը, DVR/NVR-ը և այլն:
2. Կցե՛ք կանաչ հողակցման լարը (կետ 3 վերևի նկարում) միացվող մակերևույթի վրայի հողանցման միացմանը օգտագործելով տրված պտուտակը կամ այլ համապատասխան սողնակ:



Նկար 10.2: MIC7000 IP համակարգի կառուցվածքը

1	MIC7000 տեսախցիկ
2	IP միացում
3	Ցանցային կոմուտատոր
4	Ցանցային սարքավորում (համակարգիչ, DVR/NVR և այլն):

# 11

## Տեսախցիկի տեղադրումը թեփվածությամբ

### Ծանոթագրություն.

Հնկալման դուրսացման նպատակով այս բաժնի նկարներում ներկայացված է միայն տեսախցիկը (և այն պարագաները, որոնք տեղադրվում են, եթե կիրառելի են): Նկարներում ներկայացված չեն այն լրացուցիչ պարագաները, որոնք դուք ամենայն հավանականությամբ արդեն տեղադրել եք:

MIC7000 տեսախցիկներն ունեն տեղում թեփությամբ տեղադրվելու հնարավորություն:

Անհրաժեշտության դեպքում տեղադրողները կարող են կարգավորել տեսախցիկի դիրքը ուղղահայաց դիրքից դեպի դեփությամբ դիրքի: Դրա շնորհիվ տեսախցիկը հնարավոր է լինում տեղադրել 45° անկյան տակ այնպես, որ տեսադաշտում լինի նաև անմիջապես տեսախցիկի տակի հատվածը:

Ծանոթագրություն . Այն դեպքում, եթե տեսախցիկը տեղադրված է շրջված դիրքով, տեսախցիկի թեփումն անբույլատրելի է:

### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ!



Վնասվելու վտանգը:


Մինքն արբավորումը թեփելն անջատեք այն սնուցման աղբյուրից: Ապահովեք տեսախցիկի գնդաձև հատվածի անվտանգությունն այնպես, որ այն անսպասելիորեն չթեփվի Torx պտուտակները խրոցի լծակի (կարգավորող հանգույցի) միջոցով հանելուց, ինչպես նաև բույրը կամ այլ մասերը առանձնացնելուց հետո:

### Ծանուցում!



Տեսախցիկը վնասելու վտանգը

Ոչ մի դեպքում մի թեփեք տեսախցիկն, եթե այն հորիզոնալ դիրքում է: Տեսախցիկը թույլատրվում է թեփել միայն երբ այն գտնվում է ուղղահայած դիրքում: Դա թույլ կտա խուսափել լծակների վրայից պաշտպանիչ խցանները հեռացնելուց հետո առաջացած անցքեր պտուտակների և այլ պարագաների ընկնելու վտանգից:



Նկար 11.1: ԲԱՑԱՌԻՓ պտուտակների և այլ պարագաների ընկնելը տեսախցիկի ներքին հատված:

### ԶԳՈՒՇԱՑՈՒՄ!



Վնասվելու վտանգը:

Թեփություն ունեցող տեսախցիկը (45° անկյան տակ) մի տեղադրեք տեսախցիկի պատվանդանի կամ չամբացված DCA ադապտերի վրա, երբ վերջինս նույնպես գտնվում է ուղղահայած դիրքում: Նման դիրքում այն անկայուն է և կարող է հանգեցնել տեսախցիկի ընկնելուն և վնասվելուն: Բո՛ւ ընկերությունը խստորեն խորհուրդ է տալիս տեսախցիկը թեփել միայն այն DCA ադապտերի վրա ամրացնելուց և անհրաժեշտ վայրում տեղադրելուց հետո:

### Ծանուցում!




Եթե ձեր MIC տեսախցիկը տեղադրում եք անկյան տակ, նախ անհրաժեշտ է տեղադրել արևապաշտպան հավարը:  
Եթե ձեր MIC տեսախցիկը հագեցված է և լուսարձակով և արևապաշտպան հավարով, նախ տեղադրեք լուսարձակը:

Տեսախցիկը քեֆվածությամբ տեղադրելու համար Հետևեք այս քայլերին.

1. ¼ դյույմ պտտվող գլխիկով մանեկադարձիչ բանալու (տարր 1, օգտագործողի կողմից տրամադրված) և մատակարարվող Բանալի (տարր 2) միջոցով տեսախցիկի կարգավորող հանգույցի վրայից հեռացրեք խցանը (ստորև ներկայացված նկարի տարր 3):

Կրկին ևսյն գործողությունն երկրորդ կարգավորող հանգույցի դեպքում նույնպես:



Նկար 11.2: Հեռացրեք խցանները Բանալի միջոցով

2. Մանեկադարձիչ բանալու միջոցով (օգտագործողի կողմից տրամադրված) հեռացրեք կարգավորող հանգույցի ներքևի հատվածում գտնվող երկու (2) պտուտակներն այնպես, ինչպես պատկերված է ստորև:


**Ծանուցում!**



2014 թվականի վերջում կարգավորող հանգույցը տեսախցիկի հիմքին ամրացնող 4 պտուտակները փոխարինվել են 5 մմ տրամագծով վեցանիստ գլխադիր ունեցող Torx պտուտակներով: Երկու գլխադիրներն էլ համատեղելի են Torx T30 պտուտակների համար օգտագործվող գործիքի հետ:

ձեռեք, թե ինչպիսի պտուտակներ են օգտագործվել ձեր MIC 7000 տեսախցիկի ամրացման համար, քանի որ պտուտակների ներկայացվող պահանջները տարբերվում են մեկը մյուսից, ինչպես ներկայացված է *Կարգավորող հանգույցի պտուտակների համապատասխանության պահանջները, էջ 27*-ում:





Նկար 11.3: Հեռացրե՛ք կարգավորող հանգույցի պտուտակները



**Ծանուցում!**

Սարքավորման վնասվելու վտանգը:

Հաջորդ չորս (4) կետերը կատարելիս զգուշարեն պահե՛ք տեսախցիկի գնդաձև հասովածը:


3. Պտուտակները պահե՛ք ապահով տեղում: Դրանք տեղադրվելու են իրենց տեղերը 6-րդ կետում:
4. Կրկինե՛ք 2-րդ և 3-րդ կետերը երկրորդ կարգավորող հանգույցի համար:
5. Լծակներից և գնդաձև հասովածից կազմված կառույցը զգուշարեն տեղափոխելիս դեպի առաջ:



**Ծանուցում!**


Սարքավորման վնասվելու վտանգը:

Մի քե՛հե՛ք տեսախցիկը սխալ ուղղությամբ և կետևե՛ք, որ այն չընկնի : Տեսախցիկը բույլատրվում է քե՛հել միայն այն ուղղությամբ, որը ցուցադրված է ստորև ներկայացված նկարում:



Նկար 11.4: Թեփեք տեսախցիկի գլխիկը

6. Պտուտակների միջոցով ամրացրե՛ք երկու կարգավորող հանգույցները: Ստորև ներկայացված նկարում ուշադրություն դարձրե՛ք յուրաքանչյուր պտուտակի ստույխի նշանակումներին: Պտուտակներն անհրաժեշտ է ամրացնել հատուկ հերթահանությամբ ըստ նշված տառերի:













Նկար 11.5: Տեղադրե՛ք պտուտակները կարգավորող հանգույցների վրա (ABCD)


7. Մանեկադարձիչ բանալու միջոցով (օգտագործողի կողմից տրամադրված) ամրացրե՛ք պտուտակները աղյուսակում ստորև ներկայացված հերթահանության համաձայն:

8. Համոզվե՛ք, որ բոլոր չարս պտուտակները նեղված են:

**Կարգավորող հանգույցի պտուտակների համապատասխանության պահանջները**


	SN ≤ xxxxxxxx46028xxxxxx (≤ Dec. 2014)	SN ≥ xxxxxxxx46029xxxxxx (> Dec. 2014)
	 T30/T27 Torx	 5 mm Hex (T30 Torx)
<b>1</b>  	$\approx 7.5 \text{ N m}$ $(\approx 5.5 \text{ ft lb})$	$\approx 7.5 \text{ N m}$ $(\approx 5.5 \text{ ft lb})$
<b>2</b>  	$\approx 15 \text{ N m}$ $(\approx 11 \text{ ft lb})$	$\approx 17 \text{ N m}$ $(\approx 12.5 \text{ ft lb})$
<b>3</b>  	$\approx 15 \text{ N m}$ $(\approx 11 \text{ ft lb})$	$\approx 17 \text{ N m}$ $(\approx 12.5 \text{ ft lb})$
<b>4</b>  	$\approx 15 \text{ N m}$ $(\approx 11 \text{ ft lb})$	$\approx 17 \text{ N m}$ $(\approx 12.5 \text{ ft lb})$

9. ¼ դյույմ պտտվող զլխիկով մանեկագործիչ բանալու և մատակարարվող բանալի սղադրեք խցանները:



Նկար 11.6: Տեղադրեք խցանները

10. Տեսախցիկը թեփելու գործընթացն ավարտված է:



## 12 Համակարգի Տիպային Կառուցվածքներ

### 12.1 Տիպային IP կառուցվածք 95 W midspan (առանց միացնելու մուտք/ելք)




Նկար 12.1: Տիպային IP կառուցվածք 95 Վատտ միջակայք (առանց միացնելու մուտք/ելք)

1	MIC7000 տեսախցիկ
2	MIC կախովի DCA (MIC-DCA-Hx)
3	Բարձրակարգ PoE (ցանցային) մալուխ (Cat5e/Cat6e) (user-supplied) տեսախցիկի և 95 Վատտ միջակայք (NPD-9501A) միջև
4	95 Վատտ միջակայք (NPD-9501A)
5	Միայն սվյալների փոխանցման համար նախատեսված IP մալուխ (Cat5e/Cat6e) (user-supplied) ինժեկտորի և կառավարման կենտրոնական համակարգի ցանցի միջև

Ծանոթագրություն . Cat5e/Cat6 մալուխի ընդհանուր երկարությունը պետք է կարճ լինի տեսախցիկի և կառավարման կենտրոնական համակարգի ցանցի միջև եղած 100 մ (328 ֆտ)։


## 12.2 Տիպային Կառուցվածք MIC-ALM-WAS-24 կիրառելիս



Նկար 12.2: Տիպային Կառուցվածք MIC-ALM-WAS-24 կիրառելիս

1	MIC7000 տեսախցիկ	6	24 Վ լարմամբ սնուցման վարեր, 1A, 50/60 Hz (user-supplied)
2	MIC կախովի DCA (MIC-DCA-Hx)	7	Էլեկտրոնային պոմպ
3	RS-485 մուլտի, 3 հատ հաղորդիչ (user-supplied)	8	Ինտերֆեյսային մուլտի լվացող սարքի կառավարման համար (user-supplied)
4	MIC-ALM-WAS-24 կորպուս	9	Տագնապային մուտքի/ելքի ինտերֆեյսային մուլտիներ (user-supplied)
5	Ինտերֆեյսային մուլտի 24 Վ լարման համար (user-supplied) MIC-ALM-WAS-24 համար	10	Վերահսկվող բաց վախարկիչ տագնապի ախտահարի վերահսկման համար (user-supplied)

### 12.3 Տիպային IP կառուցվածք VJC-7000-90 կիրառելիս



Նկար 12.3: Բազային կառուցվածք VIDEOJET connect 7000 հետ

1	Ethernet (ցանցի) մալուխ (Cat5e/Cat6e) (user-supplied) Բոժի տեսախցիկի և PoE ցանցային պորտի միջև պիտակավորված VIDEOJET connect 7000 վրա
2	Դեպի կառավարման կենտրոնական համակարգի ցանց ծացառապես տվյալների փոխանցման համար կիրառվող IP մալուխ հաջորդ (Cat5e/Cat6e) Ծանոթագրություն: Մալուխը նաև կարող է լինել SFP երկու միակցիչներից մեկին միացվող օպտիկամանրաթելային մալուխ:
3	Տազնապային մուտքի/էլֆի ինտերֆեյսային մալուխներ (user-supplied)
4	Տազնապային էլֆի մալուխ (user-supplied)
5	120 / 230 Վ, 50/60 հերց
6	Ջայնային ազդանունի մուտքի ինտերֆեյսային մալուխ (user-supplied)
7	Արտաֆին լվացման պոմպ (user-supplied)
8	Կլիցողոկ նյութի էլֆ, երկու հազարիչ (user-supplied)

Ծանոթագրություն . Cat5e/Cat6 մալուխի ընդհանուր երկարությունը պետք է կարճ լինի տեսախցիկի և կառավարման կենտրոնական համակարգի ցանցի միջև եղած 100 մ (328 ֆտ):

# 13 Անսարֆուրյունների ակում

## Հնարավոր խնդիրների առաջարկվող լուծումների աղյուսակ

Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են այն խնդիրները, որոնք կարող են ի հայտ գալ տեսախցիկի շահագործման ընթացքում և առաջարկվող լուծումները:

Խնդիր	Խնդիրը շտապելու հարցեր/գործողություններ
Բացակայում է տեսախցիկի կառավարումը:	Համոզվեք, որ LAN մալուխը ապահովում է պատշաճ միացում և ամրացված է: – Վերագործարկեք բրաուզերի էջը և համոզվեք, որ տեսագրությունը թարմացվում է: Անջատեք միացրեք տեսախցիկի սնուցումը:
Տեսագրությունը պտտվում է, աղավաղված է կամ ընդհատումներով է:	Ստուգեք Ethernet մալուխի բոլոր միացումների ամբողջականությունը: Եթե ամեն ինչ կարգին է, ապա Դիմեք Բոս ընկերության Տեխնիկական Աջակցության Կենտրոն
Տեսախցիկը տեղաբաժնիվում է մյուս տեսախցիկները տեղաբաժնիվ:	Համոզվեք, որ տեսախցիկի IP հասցեն ճիշտ է: Եթե տեսախցիկի IP հասցեն մոտավորված չէ, ապա Կարգավորման մենեջերի (Configuration Manager) միջոցով համոզվեք, որ բոլոր տեսախցիկների IP հասցեները տարբեր են: Եթե կա երկու տեսախցիկ, որոնց IP հասցեները համընկնում են, փոխեք մեկ տեսախցիկի հասցեն:
Բացակայում է ցանցային միացումը:	Ստուգեք բոլոր ցանցային միացումները: Համոզվեք, որ ցանկացած երկու Ethernet միացումների միջև հեռավորությունը չի գերազանցում 100 մ-ը (328 ֆուտը): Եթե ամեն ինչ կարգին է, ապա Եթե գտնվում եք էլբանի հետևում, համոզվեք, որ տեսագրության փոխանցման համար ընտրված է UDP ռեժիմը:
Մայրահեղ ցածր ջերմաստիճանային պայմանների (-40 ° (-40 °F) ցածր) ազդեցության հետևանքով տեսախցիկը ընդհանրապես չի աշխատում կամ աշխատում է ոչ պատշաճ ձևով	- Սպասեք մինչև տեսախցիկը տաքանա: PTZ գործառույթներն իրականացնելու համար տեսախցիկը պետք է 60 թպե տաքանա: - Եթե ձեզ ժամանակահատվածից հետո տեսախցիկը միևնույն է չի աշխատում, վերագործարկեք այն: Բրաուզերում URL հասցեի տողում մոտավորեք տեսախցիկի IP հասցեն և ավելացրեք “/reset” բառը:
Տեսախցիկը հաճախակի կամ ժամանակ առ ժամանակ վերագործարկվում է:	Ստուգեք ձեր տեսախցիկի աշխատանքը մեկ այլ սնուցման սարքի միջոցով:
Էլբանին չի արտացոլվում որևէ հարգաբարձրություն:	Անհրաժեշտ է Բոս ընկերության SDK վիդեո: Երբորդ կողմի վիդեո կառավարման ծրագրային ապահովումը չի կիրառում SDK:
Էլբանին ոչինչ չի արտացոլվում.	Ստուգեք, արդյոք տեսախցիկի և մոնիտորի միջև սնուցման լարը ճիշտ է միացված ցանցին:
Պատկերը աղյուս է:	Հնարավոր է սպառնալից կողոտու է: Եթե այդպես է, սրբեք այն փափուկ, մաքուր կտորով:
Պատկերի հատակությունը խափանված է:	Կարգավորեք մոնիտորի հատակությունը: Հնարավոր է, տեսախցիկը վառ լույսի ազդեցության է ենթարկվում: Եթե այդպես է, փոխեք տեսախցիկի դիրքը:



<p>Պատկերն աղավաղված է:</p>	<p>Հնարավոր է, սեսալիսիկն ենթարկվում է արևի ուղիղ հառադայթների կամ լյուսնեղեղային լուսավորության աղեղություն: Եթե այդպես է, վախեղ սեսալիսիկի դիրքը:</p>
<p>Պատկերն աղավաղված է:</p>	<p>Սուուգեղ, արդյոք ցանցի հանալիսկանությունը ճիշտ է կարգավորված, սինիսրոն է: Եթե հանալիսկանությունը ճշգրիտ կարգավորված չէ, սինիսրոնիզացիայի ռեժիմը չի կարող օգտագործվել: Միացրեղ սինիսրոնիզացիայի ռեժիմը INT-ին: (NTSC մոդելի ցանցի հանալիսկանությունը Ա ռեժիմում. 60 հերց.)</p>
<p>Պատկերը բացակայում է:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Սուուգեղ, արդյոք սնուցումը միացված է սնուցման սարքին:</li> <li>- Տեսալիսիկների IP հնարավորության համար: համոզվեղ, որ երևում է ինուերնեսային էջը</li> <li>Եթե այո, աղա վարձեղ գործարկել սեսալիսիկի էներգանուցումը, անջատելու և միացնելու այն</li> <li>Եթե հասանելի չէ, հնարավոր է մուտքագրված է սխալ IP հասցե: Կարգավորման մենեջերի (Configuration Manager) միջոցով գտեղ ճիշտ IP հասցեն:</li> <li>Եթե ամեն ինչ կարգին է, աղա</li> <li>- Սուուգեղ հասնեղալիսիկի 24 V էլեղի առկայությունը:</li> <li>Եթե ամեն ինչ կարգին է, աղա</li> <li>Սուուգեղ սեսալիսիկի բոլոր լարերի և համաղասաղխան միաղցիչների ամբողջականությունը:</li> </ul>
<p>Պատկերը խավար է:</p>	<ul style="list-style-type: none"> <li>- Համոզվեղ, որ հզորացման կարգավորիչը դրված է բարձր ռեժիմով:</li> <li>Եթե ամեն ինչ կարգին է, աղա</li> <li>- Համոզվեղ, որ աղառմատ դիաֆրագմայի մակարդակին համաղասաղխանում է սահմանված մակարդակը:</li> <li>Եթե ամեն ինչ կարգին է, աղա</li> <li>- Համոզվեղ, որ սեսալիսիկի սղղյակի կաղարիչը հեղացված է:</li> <li>Եթե ամեն ինչ կարգին է, աղա</li> <li>- Համոզվեղ, որ Էտերնետ մաղաղի աղաղեղաղայն հեղաղությունը չի գերաղանցել:</li> <li>Եթե ամեն ինչ կարգին է, աղա</li> <li>- Վերաղանգնեղ սեսալիսիկի բոլոր կարգավորումները:</li> </ul>
<p>Հետևի ֆունը չաղիաղանց պայծաղ է աղարկան տեսնելու համար:</p>	<p>Միացրեղ հետևի ֆունի լուսավորության փոխհասուցումը:</p>
<p>"Բարձր ռոկի իրաղործություն" անղերեն լեղվով կիսղաղվի OSD -ի մեղտեղում մինչև սեսալիսիկի վերամիացումը:</p>	<p>Տեսալիսիկը ենթարկվել է "Բարձր ռոկի իրաղործությունը"</p> <ul style="list-style-type: none"> <li>- Սուուգեղ մեղխանիկաղան մասերի և պոուտաղների (հասղաղես հանղայցի կարգավորիչի) ամբողջականությունը:</li> <li>- Եթե աղկա է և աղնեղայո է լուրջ վնասղածեղ, աղա դաղարեղերեղ սեսալիսիկի գործարկումը և դիմեղ Bosch-ի սղաղարկման կենարոն աղաղցության համար:</li> <li>- Եթե վնասղածեղ տեսանելի չէ, աղա կատարեղ հետևղաղ ֆաղլերը. գործարկեղ սեսալիսիկի էներգանուցումը:</li> <li>բ) Որղարկել AUX OFF 65 հրաղանղը` հեղացնելու OSD հաղորղագրությունը:</li> <li>- Եթե սեսալիսիկի վրա կարգավորված է IVA, աղա OSD հաղորղագրությունը կարող է խանղարել IVA ռաղաղարծմանը:</li> </ul>

## 14

**Սպասարկում**

Մաքրում - Անջատե՛ք սարքը նախքան մաքրելը: Որպես կանոն, չոր շորի օգտագործումը մաքրելու համար բավարար է, բայց առանց մազախավի խոնավ շոր նույնպես կարելի է օգտագործել: Մի օգտագործե՛ք հեղուկ մաքրող կամ աերազուլային նյութեր:

**Օգտագործողի կողմից սպասարկվող մասեր չկան**

Բացի արտաքին ապակու մաքրիչից, սարքը պայրունակում է օգտագործողի կողմից չսպասարկվող մասեր: Դիմե՛ք Bosch-ի տեղական սպասարկման կենտրոն՝ սարքը վերանորոգելու և տեխնիկական սպասարկման հարցերով: Մերժման դեպքում սարքը պետք է հեռացվի վերանորոգման վայրից:

**Ստուգում տեղում**

Խորհուրդ է արվում, որ վեց ամիսը մեկ սարքը զննվի տեղում՝ ստուգելու մենտաժային հեղույսների ձգուրյունը և բացահայտելու ֆիզիկական վնասվածքների նշանների առկայությունը: Այս սարքի զննումը կատարում է միայն հատուկ որակավորում ստացած մասնագետները՝ համաձայն կիրառվող օրենսգրքի պրակտիկայի (օրինակ՝ EN 60097-17):

**Տեղեկատվություն լուսատուներով տեսախցիկների մասին**

Այս բաժինը վերաբերում է միայն այն տեսախցիկներին, որոնք ունեն այլընտրանքային լուսավորող ախեսուար:

Սարքը սպասարկելիս անջատե՛ք սարքի էներգասնուցումը՝ աչքերին հնարավոր ազդեցությունից խուսափելու: Եթե սարքի էներգասնուցումը հնարավոր չէ անջատել, ապա օգտագործե՛ք լուսադիոդային մատրիցայից համապատասխան պաշտպանիչ միջոցներ կամ աչքերի համապատասխան պաշտպանություն:

**Լուսատուի հեռացում**

Եթե հարկավոր է հեռացնել լուսատուն՝ այն վնասված լինելու կամ չգործելու պատճառով, կատարե՛ք հետևյալ քայլերը.

1. Հեռացրե՛ք երեք (3) M4 աստղածև պտուտակները:
2. Տեղադրե՛ք մուտքային խրոջը (որը կարող է պահվել MIC DCA մուտքային անցքում կամ պատի մոնտաժային ախեսուարում; եթե ոչ, ապա տեսե՛ք նշումը ստորև):
3. Նշում. Եթե առկա չէ մուտքի խրոջը, պետք չի հեռացնել լուսատուն՝ մինչև Bosch-ից նոր մուտքային խրոջ պահանջելը և ստանալը:

# 15

## Տեխնիկական տվյալները

Արտադրանքի բնութագրերի նկարագրությունը ներկայացված է ձեր տեսախցիկին վերաբերվող տեխնիկական տվյալներում, որը կարող եք գտնել արտադրանքի առցանց կատալոգի համապատասխան արտադրի էջում՝ [www.boschsecurity.com](http://www.boschsecurity.com) կայքում:





**Bosch Security Systems, Inc.**

1706 Hempstead Road

Lancaster, PA, 17601

USA

**[www.boschsecurity.com](http://www.boschsecurity.com)**

© Bosch Security Systems, Inc., 2015

**Bosch Sicherheitssysteme GmbH**

Robert-Bosch-Ring 5

85630 Grasbrunn

Germany